ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«28»հունվարի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս ՀՀ Բանակի կազմավորման օրվա առթիվ:

Հայոց բանակը մեր անկախ պետականության ամենակարևոր նվաճումներից է:

ՀՀ զինված ուժերի մարտական ոգին, հայրենասիրությունը խարսխված են դարավոր պատմության ընթացքում մեր ժողովրդի ցուցաբերած ազատատենչության, զորավարների անցած փառավոր ուղու և մեր մարտիկների սխրանքի ու հայրենասիրության վրա:

Խոնարհումով ենք հիշում Հայոց պետականության կերտմանն ու պաշտպանությանն իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին:

Խորին երախտագիտություն ենք հայտնում քաջ զինվորներին, սպաներին և զինվորականներին, ովքեր այսօր էլ անսասան պաշտպանում են մեր երկրի սահմանները:

Խաղաղություն և տոկունություն մեր բանակին և հայ ժողովրդին:

Աստված պահապան Հայոց աշխարհին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ